ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(Ապրիլ 2002)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
«ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի
«Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է
մակրոտնտեսական, հարկաբյուջետային, դրամավարկային,
ինչպես նաև ՀՀ վճարահաշվարկային, բանկային համակարգի
հիմնական ցուցանիշների և տնտեսական նորմատիվների
վերաբերյալ տեղեկատվություն:
Մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ
տեղեկատվության աղբյուրը
ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է,
իսկ հարկաբյուջետային, դրամավարկային և բանկային
վիճակագրության տվյալների աղբյուրը՝
ՀՀ կենտրոնական բանկը:
Դրամավարկային և բանկային վիճակագրությունում ընդգրկված է
ՀՀ միջազգային պահուստների, դրամական ագրեգատների,
ֆինանսական շուկայի և փոխարժեքների վերաբերյալ
տեղեկատվություն:

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ
տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է.

http:// www.CBA.am

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ*

Տնտեսական աճ: 2002 թ. հունվար-ապրիլին տնտեսական աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 9.3 %: ՀՆԱ աճը պայմանավորվել է հիմնականում արդյունաբերության (ազդեցությունը ՀՆԱ աճի վրա կազմել է 3.8 տոկոսային կետ), ծառայությունների (2.2) և զուտ անուղղակի հարկերի (2.4) աճով: ՀՆԱ դեֆլյատորը 2002 թ. հունվար-ապրիլին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 1.2 %:

Սղաճ: Համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2002 թ. ապրիլին գրանցվել է սպառողական գների ընդհանուր մակարդակի 2.5 %-ով աճ՝ պայմանավորված հիմնականում «Չկնամթերք», «Միրգ» և «Բանջարեղեն և կարտոֆիլ» պարենային առանձին ապրանքախմբերի գների զգալի աճով:

2001թ. դեկտեմբերի համեմատությամբ գների ընդհանուր մակարդակի աճը կազմել է 3.4 %՝ նախորդ տարվա նույն ցուցանիշի 3.6 % աճի դիմաց: Ընդ որում, բնականոն սղաճը կազմել է 0.8 %, սեզոնային ապրանքների գներն աճել են 26.3 %-ով, պետության կողմից կարգավորվող ծառայությունների սակագները՝ 1.0 %-ով: Արդյունքում, սեզոնային ապրանքների գների փոփոխությունն ապահովել է սղաճի 2.7 տոկոսային կետը, պետության կողմից կարգավորվող ծառայությունների սակագների փոփոխությունը՝ 0.1 տոկոսային կետը, իսկ բնականոն սղաճը՝ 0.6 տոկոսային կետը:

2002 թ. հունվար-ապրիլին, 2001 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, սպառողական գների ինդեքսը կազմել է 101.0 %, իսկ ապրիլին, 2001 թ. նույն ամսվա համեմատությամբ՝ 102.7 %:

Արտաքին հատված: 2002 թ. հունվար-ապրիլ ամիսներին ապրանքների արտահանումը կազմել է 155.9 մլն ԱՄՆ դոլար (ՖՕԲ գներով)՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճելով 57.3 %-ով: Արտահանման աճը պայմանավորվել է հիմնականում «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալների գծով՝ շուրջ 2.5 անգամ, «Մանածագործական իրեր» ապրանքախմբի արտահանման գծով՝ շուրջ 2.0 անգամ և «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի արտահանման գծով՝ 19.1 %:

Ներմուծումը կազմել է 278.7 մլն ԱՄՆ դոլար (ՍԻՖ գներով)՝ նախորդ տարվա նույն ամսվա համապատասխան ցուցանիշի համեմատությամբ աճելով 9.4 %-ով, ինչը հիմնականում տեղի է ունեցել «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի ներմուծման ծավալների 84.1 %-ով աճի հետևանքով:

Արդյունքում, 2002 թ. հունվար-ապրիլին առևտրային հաշվեկշռի պակասուրդը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, նվազել է 21.2 %-ով և կազմել 122.8 մլն ԱՄՆ դոլար:

2002 թ. հունվար-ապրիլ ամիսներին ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին անվանական հաշվարկային փոխարժեքը կազմել է 569.94 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ արժեզրկվելով 3.7 %-ով: Նախորդ ամսվա համեմատությամբ փոխարժեքի արժեզրկումը կազմել է 1.1 %:

Պետական բյուջե: Ապրիլին ապահովվել են պետական բյուջեի եկամուտների ու դրամաշնորհների, այդ թվում՝ հարկային եկամուտների ծրագրով նախատեսված մակարդակները: Արդյունքում, պետական բյուջեի եկամուտներն ու դրամաշնորհները կազմել են 18.0 մլրդ դրամ, իսկ հարկային եկամուտները՝ 15.6 մլրդ դրամ: Միջին օրական հարկային եկամուտները կազմել են 677 մլն դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 475 մլն դրամի համեմատ: Հարկ է նշել, որ եկամուտների բարձր կատարողականն ուղեկցվել է հարկային եկամուտների հավաքագրման՝ տարվա սկզբից դրսևորվող անհամաչափության խորացմամբ. վերջին օրը հավաքագրվել է ամսվա հարկերի մոտ 50 %-ը:

Պետական բյուջեի ծախսերը կազմել են 18.1 մլրդ դրամ՝ ծրագրով նախատեսված 17.6 մլրդ դրամի փոխարեն: Արդյունքում, բյուջեի պակասուրդը կազմել է 0.1 մլրդ դրամ՝ ծրագրված 0.4 մլրդ դրամ հավելուրդի փոխարեն: Այն ֆինանսավորվել է հետևյալ աղբյուրների հաշվին՝ արժեթղթերի տեղաբաշխումից ստացված զուտ մուտքերը կազմել են -0.5 մլրդ դրամ, սեփականաշնորհումից մուտքերը՝ 0.6 մլրդ դրամ, մարվել է 1.6 մլրդ դրամի արտաքին վարկ, իսկ միասնական հաշվի մնացորդը նախորդ ամսվա համեմատությամբ նվազել է 1.6 մլրդ դրամով (ծրագրով նախատեսված 1.1 մլրդ դրամի փոխարեն):

ՀՀ ԿԲ նկատմամբ ՀՀ կառավարության զուտ պարտավորություններն ամսվա ընթացքում աճել են 978 մլն դրամով և կազմել 124 մլն դրամ:

Դրամավարկային քաղաքականություն: Ապրիլին դրամավարկային քաղաքականությունը պետք է ուղղված լիներ փողի բազայի՝ 77.0 մլրդ դրամ մակարդակի ապահովմանը, ինչը ենթադրում էր ամսվա ընթացքում ավելի քան 4.6 մլրդ դրամի աճ: Դա տեղի էր ունենալու հիմնականում ի հաշիվ մարտի վերջին գանձապետարանի միասնական հաշվում կուտակված մեծածավալ միջոցների և Լինսի հիմնադրամի դրամաշնորհի ակնկալվող մասնաբաժնի ծախսման՝ 8.2 մլրդ դրամ ընդհանուր գումարով: Ապրիլին պետք է իրականացվեր նաև ավելի քան 2.2 մլրդ դրամի արտաքին պարտքի սպասարկում, որը որոշ չափով կչեզոքացներ իրացվելիության նման մեծածավալ ներարկումը:

---

* *«Տնտեսական աճ» և «Արտաքին հատված» բաժինների ցուցանիշները ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախնական գնահատականներն են:*

Փաստացի արդյունքներով ապրիլին կրկնվել է փողի բազայի կառավարման մարտի սցենարը, միայն այն տարբերությամբ, որ այն տատանվել է ավելի նեղ միջակայքում և ամսվա վերջին կտրուկ չի նվազել՝ ապրիլի 30-ի դրությամբ կազմելով 75.7 մլրդ դրամ կամ ամսվա ընթացքում աճելով շուրջ 3.4 մլրդ դրամով (ծրագրված միջնակետը՝ 76.2 մլրդ դրամ):

Կենտրոնական բանկի ՁԱԱ-ն համալրվել են Լինսի հիմնադրամից ստացված ավելի քան 1.6 մլրդ դրամին համարժեք դրամաշնորհային գումարի հաշվին, որը կազմում է ամսվա չափաբաժնի մոտ կեսը, ինչպես նաև 574 մլն դրամով՝ սեփականաշնորհման արտարժութային հաշվի միջոցների փոխարկման հետևանքով: Միաժամանակ, արտարժութային պահուստներից սպասարկվել է 2.0 մլրդ դրամի արտաքին պարտք և շուկայում վաճառվել 1.1 մլրդ դրամին համարժեք արտարժույթ: Նշված շարժերի արդյունքում ԿԲ ՁԱԱ-ն նվազել են 2.1 մլրդ դրամով և ամսվա վերջին կազմել 79.6 մլրդ դրամ:

ՀՀ կառավարության զուտ պարտավորությունների ցուցանիշի վարքագծի վրա, ինչպես և նախորդ ամիսներին, ապրիլին ևս զգալի ազդեցություն է ունեցել հարկահավաքման գործընթացը, որն այս անգամ նույնպես հիմնական մասով բաժին է ընկել ամսվա վերջին օրվան: Թերևս առանձնահատկությունն այն է, որ միասնական հաշվում կուտակված մոտ 6.0 մլրդ դրամի գերակշիռ մասը, հավաքագրված հարկային եկամուտների փոքր ծավալների պայմաններում, Կառավարությունը ծախսել է ամսվա առաջին 10 օրվա ընթացքում՝ ավելացնելով փողի բազան ավելի քան 5.5 մլրդ դրամով: Այնուհետև փողի բազան աստիճանաբար նվազել է՝ պայմանավորված հավաքագրված հարկային եկամուտների՝ գանձապետարանի միասնական հաշվում կուտակմամբ: Ընդ որում, ամսվա վերջին օրը հաշվում կուտակվել է 2.5 մլրդ դրամ՝ մնացորդը հասցնելով 4.4 մլրդ դրամի, սակայն, քանի որ ԿԲ-ն այդ օրն իրականացրել է 2.0 մլրդ դրամին համարժեք արտարժույթի առք, թղթակցային հաշվի միջոցների, հետևաբար և փողի բազայի կտրուկ նվազում չի դիտվել:

Մի մասով վերոնշյալ գործարքի հետևանք էր նաև Կենտրոնական բանկի զուտ այլ ակտիվների աճը, քանի որ այն հաշվառվել էր ԿԲ հաշվեկշռի «Այլ դեբիտորներ» հոդվածում, իսկ աճի մյուս մասը՝ շուրջ 1.8 մլրդ դրամը, պայմանավորված էր ԿԲ-ի նախորդ տարվա շահույթից պետբյուջե գումարի փոխանցմամբ:

Ապրիլը, համեմատած ինչպես նախորդ ամիսների, այնպես էլ նախորդ տարվա նույն ամսվա հետ, բավականին պասիվ է եղել ԿԲ կողմից դրամավարկային գործիքների կիրառման առումով: Կենտրոնական բանկի հանդեպ բանկերի զուտ պարտավորությունների ցուցանիշն ամսվա ընթացքում փոխվել է հիմնականում ներգրաված նախկին ավանդների մարման ազդեցությամբ՝ 740 մլն դրամով:

Փողի բազայի կառուցվածքում ամսվա կտրվածքով գրանցվել է թղթակցային հաշվի միջոցների ավելի քան 3.4 մլրդ դրամի աճ՝ Կենտրոնական բանկից դուրս եղած կանխիկի գրեթե անփոփոխ մակարդակի պարագայում: Այդուհանդերձ, ամսվա առաջին կեսին արագ տեմպերով աճել է կանխիկը, իսկ այնուհետև՝ մինչև ամսվա վերջ, դիտվել է թղթակցային հաշվի միջոցների համալրում: Արդյունքում, ամիսն ընդհանուր առմամբ բնութագրվել է իրացվելիության միջին օրական ավելցուկի բարձր մակարդակով, որն առաջին 14-օրյակի 1.3 մլրդ դրամից երկրորդում հասել է 2.6 մլրդ դրամի:

Ապրիլի վերջին փողի զանգվածը (առանց կուտակված տոկոսների) կազմել է 162.5 մլրդ դրամ՝ նախորդ ամսվա համեմատ աճելով ընդամենը 67 մլն դրամով: Ի տարբերություն մարտի, երբ հիմնական շարժերն արձանագրվել էին շրջանառությունում եղած կանխիկի և արտարժութային ավանդների գծով, այս ամսվա կտրվածքով դրանք ունեցել են նվազման ուղղությամբ փոքրածավալ փոփոխություններ՝ համապատասխանաբար 149 մլն և 533 մլն դրամ գումարի: Վերջիններս էլ ամբողջությամբ չեզոքացվել են դրամային ավանդների աճի հետևանքով, ինչը պայմանավորել է նաև դրամային զանգվածի 595 մլն դրամով աճը՝ ապրիլի 30-ի դրությամբ այն հասցնելով 80.6 մլրդ դրամի:

Ժամանակաշրջանի վերջի դրությամբ փողի բազմարկիչը կազմել է 2.15՝ նախորդ ամսվա 2.24-ի, իսկ դրամային բազմարկիչը՝ 1.07՝ 1.1-ի փոխարեն: Գործոններից էական ազդեցություն է ունեցել իրացվելիության ավելցուկի բարձր մակարդակը, որը ոչ միայն չեզոքացրել է դրամային ավանդների աճի ազդեցությունը, այլ նաև նվազեցրել բազմարկիչների մակարդակը:

Թեև պետարժեթղթերի առաջնային շուկայում արձանագրվել է տոկոսադրույքների որոշակի բարձրացում, այն էական ազդեցություն չի թողել շուկայի մյուս հատվածների վրա: Նման պայմաններում, ելնելով նաև դրամավարկային քաղաքականության խնդիրներից, ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը գործիքների տոկոսադրույքները թողել է անփոփոխ:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա)

I. Իրական հատված

Անվանում	*Հունվար-մարտ*	*2002 թ. հունվար-մարտի իրական աճի ինդեքսը 2001 թ. հունվար-մարտի նկատմամբ (%)*	*Հունվար-ապրիլ*[1]	*2002 թ. հունվար-ապրիլի իրական աճի ինդեքսը 2001 թ. հունվար-ապրիլի նկատմամբ (%)*[1]
Համախառն ներքին արդյունք *(մլն դրամ)*	163311.3	107.4	228307.7	109.3
ՀՆԱ դեֆլյատոր *(%, աճողական)*	101.0	--	101.2	--
Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար դրամ, աճողական)*[2]	127.5	106.4	178.1	109.1
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն դրամ)*	76857.0	113.9	98780.6	112.1
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	1601.5	96.8	1977.9	97.6
Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն դրամ)*	31383.6	105.3	41983.0	101.5
Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը *(մլն դրամ)*	104185.7	108.8	145044.5	109.1
Կապիտալ շինարարության ծավալը *(մլն դրամ)*	10387.3	111.8	16168.6	116.9
Բնակչության դրամական եկամուտները *(մլն դրամ)*	145336.7	101.6[2]	204017.7	102.5[2]
Բնակչության դրամական ծախսերը *(մլն դրամ)*	150784.9	98.7[2]	209915.3	100.7[2]
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(դրամ)*	23955	109.1[2]	24168	108.8[2]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1418.4	--	1418.7	--
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	137.3	--	137.1	--
Գործազրկության մակարդակը (%)	9.7	--	9.1	--

II. Արտաքին հատված

Անվանում	*Հունվար-մարտ*	*2002 թ. հունվար-մարտը 2001 թ. հունվար-մարտի նկատմամբ (%)*	*Հունվար-ապրիլ*[1]	*2002 թ. հունվար-ապրիլը 2001 թ. հունվար-ապրիլի նկատմամբ (%)*[1]
Արտահանում *(ՖՕԲ, մլն ԱՄՆ դոլար)*	120.1	156.6	155.9	157.3
Ներմուծում *(ՍԻՖ, մլն ԱՄՆ դոլար)*	204.4	114.4	278.7	109.4
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ *(մլն ԱՄՆ դոլար)*	84.3	82.7	122.8	78.8

III. Գների ինդեքսներ

Ժամանակաշրջան	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	102.2	102.9	101.0	101.8
Փետրվար	99.3	100.8	99.8	95.8
Մարտ	99.4	99.6	100.0	99.5
Ապրիլ	102.5	99.8	99.6	98.8
2002 թ. հունվար-ապրիլը 2001 թ. հունվար-ապրիլի համեմատությամբ	101.0	101.5	106.6	99.5

IV. Սղաճ

ժամանակաշրջան	*2000*	*2001*	*2002*	*2002*
	նախորդ ամսվա նկատմամբ (%)			*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*
Հունվար	1.9	4.6	2.2	2.2
Փետրվար	0.1	-0.9	-0.7	1.5
Մարտ	-0.4	0.0	-0.6	0.9
Ապրիլ	-0.8	-0.1	2.5	3.4
Մայիս	-0.3	1.6		
Հունիս	-0.3	-1.3		
Հուլիս	-2.0	-2.7		
Օգոստոս	-1.3	-0.7		
Սեպտեմբեր	0.3	-1.2		
Հոկտեմբեր	0.0	0.1		
Նոյեմբեր	0.9	1.2		
Դեկտեմբեր	2.4	2.4		
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	0.4	2.9		
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	-0.8	3.1		

[1] Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախնական տվյալների:
[2] ՀՀ ԿԲ հաշվարկներով:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[1]


(մլն դրամ)

Ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ				Կառավարության ավանդներ						Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ[2] փոփոխությունը	Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ[2] մնացորդը[3]
	Կառավարության արժեթղթերի պորտֆելի փոփոխությունը	Կառավարության արժեթղթերի կտրվածքով	Վերաֆինանսավորման գծով	Ընդամենը	Հանրապետական բյուջեի միջոցներ	Մարզային բյուջեների միջոցներ	ՀՀ ԿԲ-ի միջոցներ	ՀՀ ԿԲ-ի միջոցների փոփոխությունը	ՀՀ տոհմային կամ հիմնադրամի միջոցներ	Ընդամենը		
2001												
Հունվար	1446	8534	-68	9911	3258	157	18	1000	144	4577	5334	***5686***
Փետրվար	1295	8208	-49	9454	4756	175	22	1230	0	6184	3270	***3380***
Մարտ	1021	8740	-54	9707	3156	148	20	1176	6	4506	5201	***5406***
Ապրիլ	822	9011	-38	9795	1376	175	5	1058	30	2644	7151	***7520***
Մայիս	811	8478	-23	9265	1882	179	14	882	5	2962	6303	***6434***
Հունիս	454	8369	-10	8814	2090	246	11	711	1	3058	5756	***5966***
Հուլիս	503	8615	-33	9085	1720	150	8	898	29	2805	6280	***6643***
Օգոստոս	326	8576	-27	8875	2208	149	4	763	2	3126	5749	***5911***
Սեպտեմբեր	1225	9376	-120	10481	2497	132	4	531	6	3171	7311	***7577***
Հոկտեմբեր	1225	9219	-103	10341	3469	133	22	738	4	4366	5975	***6352***
Նոյեմբեր	1225	8349	-88	9487	2840	134	11	1009	0	3994	5493	***5685***
Դեկտեմբեր	1444	8838	-92	10190	1739	142	6	0	36	1922	8268	***8478***
2002												
Հունվար	1164	7577	-51	8690	13895	142	6	0	8	14051	-5360	***-5100***
Փետրվար	958	7381	-37	8301	7562	141	6	0	9	7720	581	***747***
Մարտ	754	6741	-26	7469	8151	128	7	0	37	8322	-854	***-710***
Ապրիլ	678	6451	-17	7112	6853	127	8	0	0.5	6988	124	***348***

[1] Ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքով հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:

[2] Կառավարության նկատմամբ պահանջների և Կառավարության ավանդների տարբերությունը:


[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքով:



ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ[1]

(մլն դրամ)

Ժամկետ	Առևտրային բանկերի պարտավորությունները Կառավարության նկատմամբ[2]	Կառավարության ավանդները ԿԲ-ում[3]	Ընդամենը
2001			
Հունվար	16018	4577	20595
Փետրվար	16470	6184	22653
Մարտ	16647	4506	21153
Ապրիլ	16893	2644	19536
Մայիս	17309	2962	20271
Հունիս	17273	3058	20331
Հուլիս	17481	2805	20285
Օգոստոս	18436	3126	21562
Սեպտեմբեր	19179	3171	22350
Հոկտեմբեր	19284	4366	23651
Նոյեմբեր	19309	3994	23303
Դեկտեմբեր	18314	1922	20236
2002			
Հունվար	18825	14051	32875
Փետրվար	18785	7720	26504
Մարտ	19439	8322	27761
Ապրիլ	18943	6988	25932



[1] Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ: Ներկայացված տվյալները հաշիվների մնացորդներն են ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

[2] Ընդգրկված են առևտրային բանկերի ցպահանջ և ժամկետային պարտավորությունները Գանձապետարանի նկատմամբ՝ բացառությամբ ՀՀ սոցապ. պետական հիմնադրամի նկատմամբ պարտավորությունների:

[3] Ընդգրկված են հանրապետական բյուջեի, ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի և ՏԻԳ-երի միջոցները:

ՓՈՂԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(մլն դրամ)

	2000[2]	I եռ. 01[2]	II եռ. 01[2]	III եռ. 01[2]	IV եռ. 01[2]	IV եռ. 01[3]	Հ - 02[3]	Փ- 02[3]	Ս- 02[3]	Ա- 02[3]
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)										
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1]	***74783***	***66005***	***66775***	***71845***	***81645***	***84908***	***91157***	***84532***	***81764***	***79629***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-2393***	***-4575***	***-71***	***-281***	***-1276***	***-4539***	***-19316***	***-11676***	***-9406***	***-3904***
Կառավարություն	8292	5201	5756	7311	8268	8268	-5360	581	-854	124
Հանրապետ. կառավարություն	8294	5207	5757	7317	8304	8304	-5353	590	-817	124
այդ թվում՝ ՕԻԳ-երի միջոցներ	-889	-1176	-711	-531	0	0	0	0	0	0
ՀՀ սոցապ. պետ. հիմնադրամ	-2	-6	-1	-6	-36	-36	-8	-9	-37	0
Բանկեր	3332	2454	3794	4639	3855	3855	1920	3807	6558	7298
այդ թվում՝ ռեպո համաձայն.	0	429	1169	1414	0	0	0	0	0	0
ավանդներ (-)	0	0	0	0	-50	-50	-1680	-860	-800	-45
Զուտ այլ ակտիվներ	-14017	-12230	-9621	-12231	-13399	-16662	-15876	-16064	-15110	-11326
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [4]	***73097***	***62601***	***67214***	***72463***	***79939***	***79939***	***74045***	***74683***	***74836***	***75072***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***72390***	***61430***	***66704***	***71564***	***80369***	***80369***	***71841***	***72856***	***72358***	***75725***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	61873	49020	53918	56759	66692	66692	58080	60305	60785	60814
Պարտադիր պահուստ. (դրամով)	10350	12229	12604	14634	13489	13489	13528	12295	11251	14674
Այլ հաշիվներ	167	181	182	171	188	188	233	256	322	237
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)										
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***22167***	***-8778***	***770***	***5070***	***9800***	***-***	***6249***	***-6625***	***-2768***	***-2135***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-3630***	***-2182***	***4504***	***-210***	***-995***	***-***	***-14777***	***7640***	***2270***	***5502***
Կառավարություն	-14	-3091	555	1555	957	-	-13628	5941	-1435	978
Հանրապետ. կառավարություն	-113	-3087	550	1560	987	-	-13657	5943	-1407	941
այդ թվում՝ ՕԻԳ-երի միջոցներ	-726	287	-465	-180	-531	-	0	0	0	0
ՀՀ սոցապ. պետ. հիմնադրամ	-99	4	-5	5	30	-	-28	1	28	-37
Բանկեր	1980	-878	1340	845	-784	-	-1935	1887	2751	740
այդ թվում՝ ռեպո համաձայն.	-399	429	740	245	-1414	-	0	0	0	0
ավանդներ (-)	-40	0	0	0	50	-	-1630	-820	-60	-755
Զուտ այլ ակտիվներ	-5596	1787	2609	-2610	-1168	-	786	-188	954	3784
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [4]	***19125***	***-10496***	***4613***	***5249***	***7476***	***-***	***-5894***	***638***	***153***	***236***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***18537***	***-10960***	***5274***	***4860***	***8805***	***-***	***-8528***	***1015***	***-498***	***3367***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	16391	-12853	4898	2841	9933	-	-8612	2225	480	29
Պարտադիր պահուստ. (դրամով)	2389	1879	375	2030	-1145	-	39	-1233	-1044	3423
Այլ հաշիվներ	-243	14	1	-11	17	-	45	23	66	-85
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)										
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***42.1***	***-11.7***	***1.2***	***7.6***	***13.6***	***-***	***7.4***	***-7.3***	***-3.3***	***-2.6***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-293.5***	***-91.2***	***98.4***	***-295.8***	***-354.1***	***-***	***-325.6***	***39.6***	***19.4***	***58.5***
Կառավարություն	-0.2	-37.3	10.7	27.0	13.1	-	-164.8	110.8	-247.0	114.5
Հանրապետ. կառավարություն	-1.3	-37.2	10.6	27.1	13.5	-	-164.5	111.0	-238.5	115.2
այդ թվում՝ ՕԻԳ-երի միջոցներ	-45.0	32.3	-39.5	-25.3	-100.0	-	0	0	0	0
Բանկեր	146.4	-26.4	54.6	22.3	-16.9	-	-50.2	98.3	72.3	11.3
այդ թվում՝ ռեպո համաձայն.	-100.0	100.0	172.5	21.0	-100.0	-	0	0	0	0
ավանդներ (-)	-100.0	0	0	0	100.0	-	3260.0	-48.8	-7.0	-94.4
Զուտ այլ ակտիվներ	-66.5	12.7	21.3	-27.1	-9.5	-	4.7	-1.2	5.9	25.0
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [4]	***35.4***	***-14.4***	***7.4***	***7.8***	***10.3***	***-***	***-7.4***	***0.9***	***0.2***	***0.3***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***34.4***	***-15.1***	***8.6***	***7.3***	***12.3***	***-***	***-10.6***	***1.4***	***-0.7***	***4.7***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	36.0	-20.8	10.0	5.3	17.5	-	-12.9	3.8	0.8	0.05
Պարտադիր պահուստ. (դրամով)	30.0	18.2	3.1	16.1	-7.8	-	0.3	-9.1	-8.5	30.4
Այլ հաշիվներ	-59.3	8.4	0.6	-6.0	9.9	-	23.9	9.9	25.8	-26.4

[1] Առանց սեփականաշնորհման միջոցների: ԶԱԱ-ն ընդգրկում են փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[2] ԶԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով. 1 ԱՄՆ դոլար = 552.18 դրամ, 1 ՀՓԻ= 1.3029 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 0.9305 ԱՄՆ դոլար, 1 ուսցիա ոսկի = 264.15 ԱՄՆ դոլար:

[3] ԶԱԱ-ն հաշվարկված են նոր ծրագրային փոխարժեքներով. 1 ԱՄՆ դոլար = 561.81 դրամ, 1 ՀՓԻ = 1.2567 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 0.8904 ԱՄՆ դոլար, 1 ուսցիա ոսկի = 276.5 ԱՄՆ դոլար:

[4] Փողի բազան հաշվարկված է որպես տվյալ ամսվա վերջին օրվան նախորդող հինգ օրերի և հաջորդ ամսվա սկզբի հինգ օրերի միջինը:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵԿՇԻՌ[1]

Ցուցանիշներ	2001				2002			
	I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.	Հ	Փ	Մ	Ա
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	-10717	-9890	-9066	-8412	-1573	-1802	-2689	-1138
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	53021	46065	48340	55693	54721	55363	60273	57156
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով	-59257	-51339	-52533	-59040	-51090	-51992	-58038	-53849
Արտաքին պարտավորություններ դրամով	-4481	-4616	-4872	-5064	-5204	-5173	-4924	-4444
ԶՆԱ	108618	112773	114639	115415	108471	105332	107091	105799
Կառավարություն	355	-948	-1637	105	2659	3044	1976	2412
Հանրապետական կառավարություն	484	-792	-1492	163	2771	3149	2051	2506
Տեղական կառավարման մարմիններ	-129	-156	-144	-58	-111	-105	-75	-95
Զուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	10586	8923	10051	9936	12489	9522	5444	7615
Պահուստային ակտիվներ	13891	13593	15600	14747	16952	15065	13322	15837
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ	-3306	-4670	-5548	-4812	-4463	-5543	-7878	-8223
Տնտեսություն	107578	108476	108277	102498	83134	84847	87531	87533
Ձեռնարկություններ	64533	63748	65831	62657	57614	58136	59404	60490
Դրամով	13349	13724	14319	19111	18354	17732	17908	18308
Արտարժույթով	51183	50024	51512	43546	39259	40404	41497	42182
Տնտեսության այլ հատվածներ	43045	44728	42446	39841	25521	26711	28126	27044
Դրամով	6440	6495	5499	5529	4002	4541	5196	4824
Արտարժույթով	37962	39586	38343	35711	22917	23569	24280	23572
Զուտ այլ ակտիվներ	-9901	-3678	-2053	2876	10188	7919	12140	8239
Արտաքին ակտիվներ դրամով	230	134	138	127	125	168	102	106
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթով)	475	1112	495	1434	1246	792	5749	5376
Արտաքին պարտավորություններ (ոչ փոխարկելի արտարժույթով)	-69	-428	-89	-477	-148	-30	-4836	-4638
Ստորադաս վարկեր	0	0	0	0	0	0	0	0
Միջբանկային պահանջներ[2]	12810	9861	9584	9010	6565	5894	6184	5130
Այլ ակտիվներ	29902	31627	32703	36569	36133	36998	37910	34997
Միջբանկային պարտավ.-ներ[3]	-12669	-9939	-10191	-10029	-7783	-6825	-7199	-5183
Դրամական շուկայի գործիքներ	0	0	0	-90	-91	-92	-93	-94
Ներդրումներ փայաբաժիններում	403	365	438	452	451	451	451	440
Ստորադաս պարտավորություններ ռեզիդենտներին	0	0	0	0	0	0	0	0
Կապիտալ հաշիվներ	-33828	-27534	-25104	-25382	-18017	-18816	-18152	-16941
Զուտ ներբանկային հաշիվներ	215	236	487	332	327	374	409	319
Այլ պարտավորություններ	-7442	-9163	-10571	-9105	-8622	-10995	-8386	-11272
ԱՎԱՆԴՆԵՐ	97901	102883	105573	107003	106898	103529	104402	104661
Դրամով	18199	19243	21092	20068	21088	21616	21271	22015
Ցպահանջ ավանդներ[4]	11991	12555	14725	13395	13276	13597	13547	14423
Ժամկետային ավանդներ	6208	6688	6367	6673	7812	8019	7725	7591
Ավանդներ արտարժույթով	79702	83640	84481	86935	85809	81913	83130	82647

[1] Բոլոր դասակարգումներն իրականացված են ԱՄՀ «Դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի» հատվածային հաշվեկշիռների կազմման սկզբունքներին համապատասխան. յուրաքանչյուր գործիք ընդգրկում է հաշվարկված տոկոսները: Բոլոր արտարժութային հաշիվները հաշվարկված են շուկայական փոխարժեքներով:

[2] Ներառված է ՀՀ առևտրային բանկերի՝ միմյանց նկատմամբ պահանջների հանրագումարը:

[3] Ներառված է ՀՀ առևտրային բանկերի՝ միմյանց նկատմամբ պարտավորությունների հանրագումարը:

[4] Ընդգրկում են ռեզիդենտների՝ դրամով հաշիվները և ցպահանջ ավանդները:

ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(մլն դրամ)

	2000[2]	I եռ. 01[2]	II եռ. 01[2]	III եռ. 01[2]	IV եռ. 01[2]	IV եռ. 01[3]	Հ - 02[3]	Փ - 02[3]	Մ - 02[3]	Ա - 02[3]
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)										
ՔՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1]	***60531***	***55288***	***56885***	***62799***	***73233***	***76496***	***89584***	***82730***	***79075***	***78491***
ՔՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***91122***	***89698***	***98425***	***97251***	***98985***	***95722***	***73376***	***78824***	***84502***	***85110***
Կառավարություն	9301	5556	4808	5674	8372	8372	-2701	3625	1122	2536
Հանրապետական կառավարություն	9373	5691	4964	5825	8466	8466	-2582	3740	1234	2631
ՀՀ սոցապ. պետական հիմնադրամ	-2	-6	-1	-6	-36	-36	-8	-9	-37	0
Տեղական կառավարման մարմիններ	-70	-129	-156	-144	-58	-58	-111	-105	-75	-95
Տնտեսություն[4]	109319	107746	108638	108447	102669	102669	83156	84866	87549	87551
Չեռնարկ. և կազմակերպ.	63968	64680	63895	65978	62804	62804	57614	58136	59404	60490
որից՝ կուտակված տոկոսներ	2496	3113	4051	4551	2711	2711	2314	2357	2451	2480
Տնտեսության այլ ճյուղեր	45351	43066	44743	42469	39865	39865	25542	26730	28145	27061
որից՝ կուտակված տոկոսներ	2784	2082	2198	1707	196	196	720	680	679	552
Զուտ այլ ակտիվներ	-27498	-23604	-15021	-16870	-12056	-15319	-7079	-9667	-4169	-4977
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ [5]	***76722***	***65057***	***71420***	***75235***	***85033***	***85033***	***76854***	***79307***	***80054***	***80649***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*	***150599***	***143831***	***154342***	***158728***	***171047***	***171047***	***161795***	***160393***	***162410***	***162477***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ [6]	***151653***	***144986***	***155310***	***160050***	***172218***	***172218***	***162960***	***161554***	***163577***	***163601***
Շրջանառությունում կանխիկ դրամ	59486	46905	52246	54305	65027	65027	55831	57768	58852	58703
Ցպահանջ ավանդներ[7]	11909	12164	12735	14894	13581	13581	13485	13826	13814	14653
որից՝ կուտակված տոկոսներ	138	191	191	249	193	193	208	212	222	187
ժամկետ., խնայ. և արտարժ. ավանդ.	80259	85918	90330	90851	93609	93609	93645	89959	90911	90245
որից՝ կուտակված տոկոսներ	917	964	777	1073	978	978	957	949	945	937
այդ թվում՝ արտարժույթով ավանդներ	74774	79710	83642	84483	86936	86936	85832	81940	83186	82653
որից՝ կուտակված տոկոսներ	897	935	720	990	923	923	890	855	830	825
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)										
ՔՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***30235***	***-5243***	***1597***	***5914***	***10434***	**-**	***13088***	***-6854***	***-3655***	***-584***
ՔՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***11964***	***-1424***	***8727***	***-1174***	***1734***	**-**	***-22346***	***5448***	***5678***	***608***
Կառավարություն	-6067	-3745	-748	866	2698	-	-11073	6326	-2503	1414
Հանրապետական կառավարություն	-6510	-3682	-727	861	2641	-	-11048	6322	-2506	1397
ՀՀ սոցապ. պետական հիմնադրամ	-310	4	-5	5	30	-	-28	1	28	-37
Տեղական կառավարման մարմիններ	-133	59	27	-12	-86	-	53	-6	-30	20
Տնտեսություն	19192	-1573	892	-191	-5778	-	-19513	1710	2683	2
Չեռնարկ. և կազմակերպ.	12278	712	-785	2083	-3174	-	-5190	522	1269	1086
որից՝ կուտակված տոկոսներ	22	617	938	500	-1840	-	-397	43	94	29
Տնտեսության այլ ճյուղեր	6914	-2285	1677	-2274	-2604	-	-14323	1188	1415	-1084
որից՝ կուտակված տոկոսներ	236	-702	116	-491	-1511	-	524	-40	-1	-127
Զուտ այլ ակտիվներ	-1161	3894	8583	-1849	4814	-	8240	-2588	5498	-808
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ [5]	***20434***	***-11665***	***6364***	***3815***	***9798***	**-**	***-8179***	***2453***	***747***	***595***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*	***42054***	***-6768***	***10511***	***4387***	***12319***	**-**	***-9252***	***-1402***	***2017***	***67***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ [6]	***42199***	***-6667***	***10324***	***4740***	***12168***	**-**	***-9258***	***-1406***	***2023***	***24***
Շրջանառությունում կանխիկ դրամ	16876	-12582	5342	2059	10722	-	-9196	1937	1084	-149
Ցպահանջ ավանդներ[7]	2292	255	571	2159	-1313	-	-96	341	-12	839
որից՝ կուտակված տոկոսներ	12	53	0	58	-56	-	15	4	10	-35
ժամկետ., խնայ. և արտարժ. ավանդ.	23032	5659	4412	521	2758	-	36	-3686	952	-666
որից՝ կուտակված տոկոսներ	134	47	-187	296	-95	-	-21	-8	-4	-8
այդ թվում՝ արտարժույթով ավանդներ	21750	4936	3932	841	2453	-	-1104	-3892	1246	-533
որից՝ կուտակված տոկոսներ	130	39	-216	270	-67	-	-33	-35	-25	-5
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)										
ՔՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***99.8***	***-8.7***	***2.9***	***10.4***	***16.6***	**-**	***17.1***	***-7.7***	***-4.4***	***-0.7***
ՔՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***15.1***	***-1.6***	***9.7***	***-1.2***	***1.8***	**-**	***-23.3***	***7.4***	***7.2***	***0.7***
Կառավարություն	-39.5	-40.3	-13.5	18.0	47.6	-	-132.3	234.2	-69.0	126.0
Հանրապետական կառավարություն	-41.0	-39.3	-12.8	17.3	45.3	-	-130.5	244.8	-67.0	113.2
Տեղական կառավարման մարմիններ	-65.5	84.3	20.9	-7.7	-59.7	-	91.4	-5.4	-28.6	26.7
Տնտեսություն	21.3	-1.4	0.8	-0.2	-5.3	-	-19.0	2.1	3.2	0.0
Չեռնարկ. և կազմակերպ.	23.8	1.1	-1.2	3.3	-4.8	-	-8.3	0.9	2.2	1.8
Տնտեսության այլ ճյուղեր	18.0	-5.0	3.9	-5.1	-6.1	-	-35.9	4.7	5.3	-3.9
Զուտ այլ ակտիվներ	-4.4	14.2	36.4	-12.3	28.5	-	53.8	-36.6	56.9	-19.4
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ [5]	***36.3***	***-15.2***	***9.8***	***5.3***	***13.0***	**-**	***-9.6***	***3.2***	***0.9***	***0.7***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*	***38.7***	***-4.5***	***7.3***	***2.8***	***7.8***	**-**	***-5.4***	***-0.9***	***1.3***	***0.04***

ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ[6]	*38.6*	*-4.4*	*7.1*	*3.1*	*7.6*	*-*	*-5.4*	*-0.9*	*1.3*	*0.01*
Շրջանառությունում կանխիկ դրամ	39.6	-21.2	11.4	3.9	19.7	-	-14.1	3.5	1.9	-0.3
Ցպահանջ ավանդներ[7]	23.8	2.1	4.7	17.0	-8.8	-	-0.7	2.5	-0.1	6.1
Ժամկետ., խնայ. և արտարժ. ավանդներ	40.2	7.1	5.1	0.6	3.0	-	0.04	-3.9	1.1	-0.7
այդ թվում՝ արտարժույթով ավանդներ	41.0	6.6	4.9	1.0	2.9	-	-1.3	-4.5	1.5	-0.6

[1] ԶԱՄ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ԶԱՄ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքով, առևտրային բանկերի ԶԱՄ-ն փաստացի փոխարժեքով:

[2] Կենտրոնական բանկի ԶԱՄ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 552.18 դրամ, 1 SDR = 1.3029 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 0.9305 ԱՄՆ դոլար, 1 ունցիա ոսկի = 264.15 ԱՄՆ դոլար:

[3] Կենտրոնական բանկի ԶԱՄ-ն հաշվարկված են նոր ծրագրային փոխարժեքներով. 1 ԱՄՆ դոլար = 561.81 դրամ, 1 SDR = 1.2567 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 0.8904 ԱՄՆ դոլար, 1 ունցիա ոսկի = 276.5 ԱՄՆ դոլար:

[4] 2002 թ. հունվարից ԿԲ-ի «Ներդրումներ ռեզիդենտ իրավաբանական անձանց կապիտալում» հաշիվը տնտեսության պահանջներից վերադասակարգված է այլ ակտիվներում, որի պատճառով տնտեսության նկատմամբ պահանջների՝ հունվարից ապրիլ ամիսների ցուցանիշները տարբերվում են նախկինում ներկայացված ցուցանիշներից:

[5] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ միայն դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները (առանց կուտակված տոկոսների):

[6] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները, արտարժութային ավանդները (ներառյալ կուտակված տոկոսները):

[7] Ընդգրկում է ռեզիդենտների՝ դրամով հաշիվները և ցպահանջ ավանդները:

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1]

(մլն դրամ)


ժամկետ	Շրջանառությունում կանխիկ դրամ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	M1[2]	ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	M2[3]	Արտարժույթով ավանդներ	M2X[4]
2001							
Հունվար	48128	13071	61199	5902	67101	75716	142817
Փետրվար	47351	12150	59501	6214	65715	73573	139288
Մարտ	46905	11973	58877	6179	65057	78775	143831
Ապրիլ	48550	12885	61435	6373	67808	77261	145069
Մայիս	50564	12021	62585	6293	68878	78912	147790
Հունիս	52246	12543	64789	6631	71420	82922	154342
Հուլիս	53779	13123	66902	5674	72576	83517	156092
Օգոստոս	56394	11835	68229	5969	74198	86341	160539
Սեպտեմբեր	54305	14645	68950	6285	75235	83493	158728
Հոկտեմբեր	58799	13183	71982	6451	78433	85247	163680
Նոյեմբեր	59089	13793	72882	6762	79644	86244	165888
Դեկտեմբեր	65027	13388	78415	6618	85033	86013	171047
2002							
Հունվար	55831	13277	69108	7746	76854	84942	161795
Փետրվար	57768	13614	71382	7925	79307	81085	160393
Մարտ	58852	13592	72444	7610	80054	82356	162410
Ապրիլ	58703	14466	73169	7480	80649	81828	162477


[1] Ավանդների մեջ կուտակված տոկոսները չեն ընդգրկված:


[2] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ դրամը և ցպահանջ ավանդները (ներառյալ հաշիվները):

[3] M2-ը դրամային զանգվածն է. ընդգրկում է M1-ը և դրամով ժամկետային ավանդները:


[4] M2X-ը փողի զանգվածն է. ընդգրկում է M2-ը և արտարժույթով ավանդները (ներառյալ հաշիվները):


Փողի բազան տատանումների թույլատրելի միջակայքում
2002 թ. հունվար-մարտ ամիսներին
մլն դրամ
83000
81500
80000
78500
77000
75500
74000
72500
71000
69500
03.01.02
06.01.02
09.01.02
12.01.02
15.01.02
18.01.02
21.01.02
24.01.02
27.01.02
30.01.02
02.02.02
05.02.02
08.02.02
11.02.02
14.02.02
17.02.02
20.02.02
23.02.02
26.02.02
01.03.02
04.03.02
07.03.02
10.03.02
13.03.02
16.03.02
19.03.02
22.03.02
25.03.02
28.03.02
31.03.02
03.04.02
06.04.02
09.04.02
12.04.02
15.04.02
18.04.02
21.04.02
24.04.02
27.04.02
30.04.02
Փողի բազա
Ծրագիր
Ծրագիր՝ +2%
Ծրագիր՝ -2%



Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն դրամ
90000
75000
60000
45000
30000
15000
0
1999 Հ 00 Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ Հ 01 Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ Հ 02 Փ Մ Ա
Կանխիկ դրամ ԿԲ-ից դուրս
Պարտ. պահուստ. դրամով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն դրամ
180000
160000
140000
120000
100000
80000
60000
40000
20000
0
1999 Հ 00 Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ Հ 01 Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ Հ 02 Փ Մ Ա
Շրջանառությունում կանխիկ դրամ
Ցպահանջ ավանդներ
Ժամկետային ավանդներ
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում




Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում



Փողի բազայի ամսական փոփոխությունը և ամսական սղաճը




Փողի զանգվածի ամսական փոփոխությունը և ամսական սղաճը



ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՋՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ[1]

(մլն դրամ)

Ցուցանիշներ	2001				2002			
	I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.	Հ	Փ	Մ	Ա
Կենտրոնական բանկի ՋԱԱ	66005	66775	71845	84908	91157	84532	81764	79629
Առևտրային բանկերի ՋԱԱ	-10717	-9890	-9046	-8412	-1573	-1802	-2689	-1138
Ընդամենը	55288	56885	62799	76496	89584	82730	79075	78491
Կենտրոնական բանկի ՋԱԱ[2]	***66839***	***67855***	***72525***	***85782***	***91853***	***85194***	***82422***	***80199***



[1] ՋԱԱ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ՋԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքով, առևտրային բանկերի ՋԱԱ-ն փաստացի փոխարժեքով: Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքով, հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:

[2] Հաշվարկված են կուտակման սկզբունքով:

ՍԵԶՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ*

(մլն դրամ)


Ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ դրամ	M1	M2	M2X
2001					
Հունվար	66343	48434	61476	67749	143077
Փետրվար	63891	50685	64157	70133	144845
Մարտ	64528	49726	63338	69106	147612
Ապրիլ	67921	51707	65354	71412	151914
Մայիս	65698	53559	65853	71737	154371
Հունիս	69798	54866	67805	74185	159474
Հուլիս	67949	52911	65195	70924	153814
Օգոստոս	68107	55146	64900	71086	154338
Սեպտեմբեր	68602	52113	64730	71469	154042
Հոկտեմբեր	71740	57666	70530	77117	162655
Նոյեմբեր	72366	57700	70673	77499	162491
Դեկտեմբեր	72931	55636	70831	77709	162555
2002					
Հունվար	73620	56186	69421	77596	162462
Փետրվար	77033	61836	76968	84639	167175
Մարտ	76008	62392	77932	85037	167063
Ապրիլ	79522	62520	77836	84936	170143

** Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով:*

Հարթեցման մեթոդիկան նկարագրված է «ՀՀ կենտրոնական բանկի բանբերի» 2001 թ. 2-րդ եռամսյակի համարում հրապարակված «ՀՀ փողի ագրեգատների թվային շարքերի հարթեցումներ» նյութում:

Ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են, քանի որ նոր տվյալների ի հայտ գալուն զուգահեռ համապատասխան ամիսների սեզոնայնության գործակիցները փոխվում են: Այդ իսկ պատճառով «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի յուրաքանչյուր տարվա առաջին համարում հրապարակվում են փողի ագրեգատների հարթեցված նոր շարքերը:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները




Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի փաստացի և հարթեցված մակարդակներ



Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ[1]

(մլն ԱՄՆ դոլար)

Անվանումը	2000[3]	2001				2002			
		I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.[4]	Հ	Փ	Մ	Ա
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)*	314.1	293.7	304.9	316.8	329.6	337.2	324.0	319.9	317.2
Համախառն միջազգային պահուստներ	330.5	324.0	312.7	324.0	333.2	340.8	327.6	323.6	319.8
այդ թվում՝									
Մոնետար ոսկի	12.2	11.6	12.1	13.1	12.4	12.6	13.2	13.5	13.8
SDR ԱՄՀ-ում	21.5	19.8	16.6	12.5	10.2	8.4	6.1	6.1	4.1
Արտարժույթ[2]	296.8	292.6	283.9	298.3	310.6	319.8	308.3	304.0	302.0
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)*[5]	***316.1***	***295.5***	***306.9***	***318.4***	***331.2***	***338.6***	***325.3***	***321.3***	***318.6***


[1] Հաշվարկված են փաստացի փոխարժեքներով: Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքով, հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:

[2] Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[3] Ներառված չեն ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները: ԱՄՀ-ում SDR-ով միջոցները հաշվարկված են հիմք ընդունելով 2000 թ. դեկտեմբերի 31-ին ԱՄՀ կողմից սահմանված 1 SDR=1.3029 ԱՄՆ դոլար փոխարժեքը, որը տարբերվում է այդ օրվա դրությամբ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքից: Ոսկին հաշվարկված է փոփոխված գնով: Այս պատճառներով դեկտեմբերի համախառն միջազգային պահուստների ցուցանիշները տարբերվում են ՀՀ ԿԲ նախկին հրապարակումների համապատասխան ցուցանիշներից:

[4] Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները: ԱՄՀ-ում SDR-ով միջոցները հաշվարկված են հիմք ընդունելով 2001 թ. դեկտեմբերի 31-ին ԱՄՀ կողմից սահմանված 1 SDR = 1.2567 ԱՄՆ դոլար փոխարժեքը, որը տարբերվում է այդ օրվա դրությամբ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքից: Այդ պատճառներով դեկտեմբերի համախառն միջազգային պահուստները տարբերվում են 2001 թ. դեկտեմբերի, 2002 թ. հունվար և փետրվար ամիսների «ՀՀ ԿԲ տեղեկագիր» պարբերականում հրապարակված համապատասխան ցուցանիշներից:

[5] Հաշվարկված են կուտակման սկզբունքով:



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

Ցուցանիշներ	2000[3]	2001												2002			
	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ	Հ	Փ	Մ	Ա
Վարկեր[1]																	
Իրավաբանական անձանց																	
ՀՀ դրամով	28.1	33.9	35.1	22.0	37.4	34.8	30.5	33.2	29.4	25.6	27.6	30.0	27.5	23.4	20.0	24.3	19.9
ԱՄՆ դոլարով	31.8	26.1	25.7	27.0	29.4	27.3	22.1	24.8	25.9	26.3	21.2	19.0	20.3	28.6	20.7	17.3	15.6
Ֆիզիկական անձանց																	
ՀՀ դրամով	36.8	27.6	36.4	31.7	24.3	24.2	29.6	31.9	32.6	29.6	34.1	26.1	30.2	29.8	29.3	28.0	28.4
ԱՄՆ դոլարով	39.3	38.8	35.4	35.1	33.5	33.6	35.0	33.0	34.7	36.8	36.4	35.3	35.5	37.1	34.0	37.1	36.3
Ավանդներ[1]																	
Իրավաբանական անձանցից																	
ՀՀ դրամով	19.3	21.9	22.0	21.5	14.1	17.4	15.1	23.4	11.8	18.0	13.6	16.8	15.0	10.0	12.0	13.0	9.6
ԱՄՆ դոլարով	12.6	5.8	15.8	12.6	12.6	12.9	13.4	10.5	11.9	8.1	6.7	13.2	9.7	4.0	14.0	6.7	10.1
Ֆիզիկական անձանցից																	
ՀՀ դրամով	19.1	20.8	22.2	20.1	21.8	22.4	22.6	20.6	19.3	19.5	17.2	19.4	14.6	11.9	9.8	10.2	11.8
ԱՄՆ դոլարով	15.9	11.2	13.4	13.7	13.4	12.8	12.5	11.2	11.8	11.9	10.2	11.6	10.8	9.3	7.1	9.3	8.5
ԿԲ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը	25.0	25.0	25.0	23.0	21.0	21.0	16.0	16.0	15.0	15.0	15.0	15.0	15.0	14.0	13.5	13.5	13.5
ԿԲ-ում ՀՀ բանկերի ավանդների տոկոսադրույքը	8.0	8.0	8.0	8.0	8.0	8.0	8.0	8.0	8.0	8.0	8.0	8.0	8.0	8.0	6.0	6.0	6.0
ԿԲ լոմբարդային վարկերի տոկոսադրույքը	45.0	45.0	45.0	45.0	44.0	44.0	40.0	40.0	35.0	35.0	35.0	35.0	30.0	30.0	28.0	28.0	28.0
Պետական պարտատոմսերի եկամտաբերությունը[2]	27.7	25.9	23.8	25.1	24.6	21.0	20.0	18.5	18.0	19.0	17.5	16.8	16.4	14.3	13.8	13.0	14.1
Սղաճ	0.4	4.6	-0.9	0.02	-0.1	1.6	-1.3	-2.7	-0.7	-1.2	0.1	1.2	2.4	2.2	-0.7	-0.6	2.5

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:


[1] Ներկայացված են 90-օրյա վարկերի և ավանդների միջին կշռված տոկոսադրույքները: 2001 թ. հունիսի՝ իրավաբանական անձանց արտարժույթով ավանդների և նոյեմբերի՝ իրավաբանական անձանց դրամով և արտարժույթով ավանդների համար ներկայացված են 180-օրյա միջին կշռված տոկոսադրույքները:

[2] Ներկայացված է 9-12-ամսյա պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը: 2000 թ. դեկտեմբեր և 2001 թ. հունվար-փետրվար ամիսների համար ներկայացված է 6-9-ամսյա պարտատոմսերի (ներառյալ 2001 թ. փետրվարի 175-օրյա պարտատոմսերը) միջին կշռված եկամտաբերությունը: Այս ցուցանիշները տարբերվում են ՀՀ ԿԲ նախկին հրապարակումների ցուցանիշներից, քանզի այս բաժնում նախկինում ներկայացվել է տարբեր ժամկետայնության պարտատոմսերի եկամտաբերությունը:

[3] Ներկայացված են վերջին ամիսների տոկոսադրույքները: Սղաճը ներկայացված է նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ:

ՀՀ ԴՐԱՄ / ԱՄՆ ԴՈԼԱՐ ՓՈԽԱՐԺԵՔԸ

Ամսաթիվ	Հ-01	Օ-01	Ս-01	Հ-01	Ն-01	Դ-01	Հ-02	Փ-02	Մ-02	Ա-02
1	-	553.67	-	554.14	563.14	-	-	563.99	568.18	576.96
2	554.63	553.36	-	554.14	563.14	-	-	-	-	577.26
3	554.21	553.49	554.59	555.58	-	566.51	561.81	-	-	577.56
4	555.05	-	553.60	555.58	-	566.51	561.81	563.84	568.18	577.56
5	-	-	554.06	558.44	563.14	566.51	-	563.18	567.71	577.88
6	554.12	553.49	553.95	-	563.14	566.51	-	563.28	568.68	-
7	-	552.89	554.23	-	563.67	566.51	562.15	564.21	568.68	-
8	-	552.89	-	558.44	563.67	-	562.55	564.09	-	577.88
9	554.59	552.89	-	558.44	563.67	-	563.01	-	-	578.28
10	554.52	554.00	553.66	558.44	-	566.20	563.70	-	-	578.28
11	553.46	-	554.42	559.90	-	565.85	564.15	564.25	569.45	578.18
12	553.40	-	554.77	559.97	563.67	564.94	-	564.05	570.10	577.22
13	553.58	554.00	554.77	-	564.38	564.76	-	564.42	570.55	-
14	-	554.00	553.89	-	564.52	564.45	564.60	565.00	571.12	-
15	-	554.00	-	561.57	564.68	-	565.06	565.53	571.57	577.22
16	553.44	554.30	-	561.73	564.32	-	565.48	-	-	577.22
17	553.51	554.30	553.81	563.46	-	564.86	565.48	-	-	577.76
18	553.51	-	553.92	564.31	-	564.86	565.98	565.53	571.57	578.46
19	554.32	-	553.32	564.80	564.65	564.86	-	565.27	571.98	578.86
20	554.45	554.87	553.93	-	564.73	564.86	-	565.84	572.66	578.86
21	-	556.00	-	-	565.17	564.86	565.16	565.84	572.84	-
22	-	556.50	553.93	563.11	565.55	-	564.86	566.86	573.58	578.86
23	554.32	556.50	-	563.11	565.25	-	564.44	566.86	-	578.97
24	553.71	556.50	553.93	563.11	565.25	564.51	564.27	-	-	-
25	553.90	556.50	554.09	563.23	565.25	563.62	564.18	566.86	573.98	579.09
26	553.90	-	554.09	563.02	565.73	563.37	-	566.86	574.82	579.79
27	554.22	556.50	554.09	563.02	565.81	562.49	-	566.96	575.12	579.79
